

1 ապրիլի 2002թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2002 թվականի № 316
ք.Երևան

ՄԻԱՎ/ՉԻԱՐ-ի կանխարգելման հանրապետական ծրագիրը
և ՄԻԱՎ/ՉԻԱՐ-ի կանխարգելման հանրապետական
միջգերատեսչական խորհրդի կազմը հաստատելու մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

ա) ՄԻԱՎ/ՉԻԱՐ-ի կանխարգելման հանրապետական ծրագիրը (կցվում է):

բ) ՄԻԱՎ/ՉԻԱՐ-ի կանխարգելման հանրապետական միջգերատեսչական խորհրդի
կազմը (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2002 թվականի *ապրիլի 1-ից*.

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ

Ներածություն

Այսօր ՁԻԱՅ-ը լուրջ սպառնալիք է աշխարհի ամբողջ բնակչության համար, սպառնալիք՝ նրա համընդհանուր սոցիալական, տնտեսական և քաղաքական բարեկեցության ու միլիոնավոր մարդկանց առողջության նկատմամբ: Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման ոլորտի խնդիրները հայտարարել է գերակայող և իրականացվող ծրագրերի ու միջոցառումների ցանկում առաջնությունը տվել է ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի տարածման դեմ իրականացվող միջոցառումներին:

Հայաստանի Հանրապետությունում մարդու ինունային անբավարարության վիրուսով վարակվածության դեպքերի արձանագրումն սկսվել է 1988 թվականից:

1988 թվականից մինչև 2001 թվականի սեպտեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է 161 ՄԻԱՎ վարակակիր: ՄԻԱՎ վարակակիրների մեծամասնությունը (78,9 տոկոս) ընդգրկված է 20-39 տարեկանների տարիքային խմբում: Վարակակիրներից 28-ը փստորոշվել է որպես ՁԻԱՅ-ով հիվանդ, ընդ որում, 8-ը (29 տոկոս)՝ 1999 թվականին: Մինչև այժմ գրանցվել է 18 ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով հիվանդի մահվան դեպք, որից 5-ը՝ 2000, իսկ 3-ը՝ 2001 թվականին:

Հայաստանում ՄԻԱՎ վարակի փոխանցման հիմնական ուղիներն են՝ ներերակային ներարկմամբ թմրանյութեր օգտագործելու միջոցով (45,3 տոկոս) և հետերոսեքսուալ ճանապարհով վարակումը (41,6 տոկոս):

Ի դեպ, վերջին տարիներին ներերակային ներարկմամբ թմրանյութեր օգտագործելու ճանապարհով վարակման դեպքերի զգալի աճ է նկատվում:

Իրավիճակի վերլուծության ընթացքում պարզվել է, որ Հայաստանի Հանրապետությունում ապրող ՄԻԱՎ վարակակիրների իրական թիվն զգալիորեն գերազանցում է պաշտոնական վիճակագրության տվյալները:

Թմրանյութային և ՄԻԱՎ-ի տարածվածության վիճակի արագ գնահատման տվյալներով ներերակային ներարկմամբ թմրանյութեր օգտագործողների շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը 9-19 տոկոսի սահմաններում է:

Ընտրանքային համաճարակաբանական հսկման տվյալներով ՄԻԱՎ-ի տարածվածությունը մարմնավաճառների շրջանում 0,5-6 տոկոսի սահմաններում է:

ՄԻԱՎ վարակի դեպքեր են արձանագրվում նաև ազատագրված վայրերում:

ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի փստորոշումն ու կանխարգելումն իրականացնելու նպատակով 1989 թվականի նոյեմբերին ստեղծվել է «ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» պետական հիմնարկը:

Հանրապետության դպրոցներում առողջապահական կրթության ոլորտին վերաբերող գիտելիքների դասավանդումը (այդ թվում՝ ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի, ՍՃՓՅ-ների (սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ) և թմրանյութերի օգտագործման մասին տեղեկատվությունը) ուսումնական ծրագրում ընդգրկված չէ:

Թմրանյութային, մարմնավաճառության և այլ սոցիալական դրսևորումների գոյություն ունեցող մակարդակը, բնակչության՝ ընդհանրապես, և երիտասարդության՝ մասնավորապես, իրազեկության ցածր մակարդակը, պետական մակարդակով կանխարգելման միջոցառումների միջգերատեսչական համագործակցության և համակարգման բացակայությունը, մասնագիտացված ծառայությունների փոքր հնարավորությունները պարարտ հող են ստեղծում հանրապետությունում ՄԻԱՎ վարակի ինտենսիվ տարածման համար:

Հայաստանում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի հակազդման միջոցառումների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք չեն համապատասխանում առկա իրավիճակին:

Ծրագրի նպատակը Հայաստանի Հանրապետությունում ՄԻՎ վարակի տարածման նվազեցումն է:

Ծրագրի խնդիրներն են՝

- ա) ՄԻՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելմանն ու բուժմանն ուղղված ազգային քաղաքականության զարգացումը և իրականացումը.
- բ) ներերակային ներարկմամբ թմրանյութեր օգտագործողների շրջանում ՄԻՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելումը.
- գ) անվտանգ սեռական վարքագծի ձևավորումը.
- դ) մորից նորածնին ՄԻՎ վարակի փոխանցման կանխարգելումը.
- ե) դոնորական արյան անվտանգության ապահովումը.
- զ) դեռահասների և երիտասարդների շրջանում ՄԻՎ/ՉԻԱՀ-ի և ՍՃՓՀ-ների կանխարգելումը.
- է) ՄԻՎ/ՉԻԱՀ-ով տառապող մարդկանց նկատմամբ հոգածությունը:

ՄԻՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական ծրագրով (այսուհետև՝ հանրապետական ծրագիր) նախատեսվում է համապատասխան միջոցառումներ իրականացնել 2002-2006 թվականներն ընկած ժամանակահատվածում:

Հանրապետական ծրագրի իրականացման աշխատանքները համակարգելու է ստեղծվող ՄԻՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական միջգերատեսչական խորհուրդը:

Նախատեսվում է հանրապետական ծրագրի իրագործման ֆինանսավորումն իրականացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաև՝ միջազգային և այլ կազմակերպությունների միջոցներով:

ՄԻՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման բնագավառում 2002-2006 թվականներին իրականացվելու են առաջնահերթ միջոցառումներ՝ համաձայն ժամանակացույցի (կցվում է):

1. ՄԻՎ/ՉԻԱՀ-ի համաճարակի հակազդման ազգային ռազմավարությունը

Ռազմավարության նպատակը՝ Հայաստանի Հանրապետությունում ՄԻՎ/ՉԻԱՀ-ի տարածման տեմպերի իջեցում:

1.1. ՄԻՎ/ՉԻԱՀ-ի համաճարակի հակազդման ոլորտում ազգային քաղաքականության զարգացումը

Նպատակը՝ ՄԻՎ/ՉԻԱՀ-ի համաճարակի դեմ պետական մակարդակով միջգերատեսչական հակազդեցության ձևավորում:

Ռազմավարություն 1. ՄԻՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման միջոցառումների իրականացման աշխատանքների ղեկավարման միասնական համակարգի ստեղծում

Միջոցառումները՝

- ա) ՄԻՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական միջգերատեսչական խորհրդի ստեղծում.
- բ) ՄԻՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման տարածքային միջգերատեսչական խորհուրդների ստեղծում մարզերում և Երևան քաղաքում.
- գ) ՄԻՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման միջոցառումների իրականացման ընթացիկ աշխատանքների հսկում և համակարգում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից:

Ռազմավարություն 2. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման ոլորտին վերաբերող Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործում

Միջոցառումները՝

- ա) «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխությունների և լրացումների կատարում.
- բ) «Մամուլի և զանգվածային լրատվության միջոցների մասին» ու «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխությունների և լրացումների կատարում՝ ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման սոցիալական գովազդի անվճար տեղադրման համար:

Ռազմավարություն 3. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման ոլորտի մասնագիտացված ծառայությունների զարգացում

Միջոցառումները՝

- ա) ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի, ՍՃՓՀ-ների և թմրամոլության կանխարգելմանը, ախտորոշմանն ու բուժմանը վերաբերող միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում.
- բ) ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման ոլորտում փորձարկված առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման հարցերով զբաղվող մասնագետների պատրաստում.
- գ) ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի և ՄԻԱՎ-ի հետազոտություններ իրականացնող լաբորատորիաների համար անհրաժեշտ թեստ-համակարգերի զննման ֆինանսավորման տրամադրում՝ այնպիսի ծավալներով, որը հնարավորություն կտա ապահովելու ՄԻԱՎ-ի հետազոտությունների իրականացումը բնակչության խոցելի խմբերում, այդ թվում հղիների շրջանում, ՄԻԱՎ-ի ախտորոշումը և բնակչության գաղտնի, անանուն հետազոտման պահանջարկը.
- դ) բուժիաստատություններում և այլ կազմակերպություններում բնակչության, այդ թվում՝ բարձր ռիսկի խմբերի համար խորհրդատվության համակարգի ներդրում.
- ե) ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման հարցերով զբաղվող բժշկական կադրերի պլանային վերապատրաստման նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ազգային ինստիտուտի կողմից կրթական ծրագրի իրականացում:

Ռազմավարություն 4. Ուսումնական հաստատություններում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի, ՍՃՓՀ-ների և թմրամոլության կանխարգելման նպատակով համապատասխան կրթական ծրագրերի իրականացում

Միջոցառումները՝

- Դպրոցականների և ուսանողների (սովորողների) համար ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի, ՍՃՓՀ-ների և թմրամոլության կանխարգելմանը վերաբերող ուսումնական ծրագրերի մշակում և ներդրում:

1.2. Ներերակային ներարկմամբ թմրանյութեր օգտագործողների շրջանում ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելումը

Նպատակը` ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի տարածման տեմպերի իջեցում ներերակային ներարկմամբ թմրանյութեր օգտագործողների և, դրա շնորհիվ, բնակչության շրջանում: ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելման խնդիրների զուգակցում թմրանյութային առաջնային կանխարգելման խնդիրներին:

Ռազմավարություն 1. Թմրանյութերի մատակարարման նվազեցում

Միջոցառումները`

Թմրանյութերի անօրինական արտադրության, տեղափոխման, պահման և իրացման ոլորտների նկատմամբ համապատասխան պետական մարմինների կողմից վերահսկողության ուժեղացում:

Ռազմավարություն 2. Թմրանյութերի ոչ բժշկական օգտագործումից առաջացած վնասի նվազեցում

Միջոցառումները`

- ա) բնակչության խոցելի խմբերի ներկայացուցիչների իրազեկության մակարդակի բարձրացում, անվտանգ վարքի հմտությունների ձևավորում, այդ թվում` «Հավասարը` հավասարին» մեթոդով: Փոխօգնության խմբերի ստեղծում.
- բ) ներարկիչների փոխանակում նախատեսող փորձնական ծրագրերի մշակում և ներդրում.
- գ) ներերակային ներարկմամբ թմրանյութեր օգտագործողների խոցելի խմբում ՄԻԱՎ-ի տարածման նկատմամբ ընտրանքային համաճարակաբանական հսկման համակարգի ներդրում և զարգացում:

Ռազմավարություն 3. Թմրանյութային առաջնային և երկրորդային կանխարգելում

Միջոցառումները`

- ա) բնակչության շրջանում թմրանյութային կանխարգելման բնագավառի մասին իրազեկության մակարդակի բարձրացում` զանգվածային լրատվության միջոցներով.
- բ) ուսումնական ծրագրերում թմրանյութային կանխարգելմանը վերաբերող հարցերի մշակում և ներդրում: «Հավասարը` հավասարին» մեթոդի իրագործում.
- գ) թմրանյութերի համար վերականգնողական համակարգի ստեղծում:

1.3. Անվտանգ սեռական վարքագիծ

Նպատակը` սեռական ճանապարհով ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի և ՍՃՓՅ-ների տարածման իջեցում:

Ռազմավարություն 1. Բնակչության անվտանգ սեռական վարքագծին վերաբերող հարցերի մասին իրազեկության մակարդակի բարձրացում

Միջոցառումները`

- ա) բնակչության տարբեր խմբերի համար ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի և ՍՃՓՅ-ների կանխարգելման տեղեկատվական-կրթական ծրագրերի մշակում.

- բ) բուժաշխատողների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելմանը վերաբերող գիտելիքների մակարդակի բարձրացում.
- գ) բնակչության խոցելի խմբերի համար զանգվածային միջոցառումների իրականացում, տեղեկատվական-կրթական նյութերի հրատարակում:

Ռազմավարություն 2. Պահպանակների մասսայականացում և մատչելիություն

Միջոցառումները՝

- ա) միգրանտների, զինծառայողների, կալանավայրերում և ազատազրկման վայրերում գտնվողների շրջանում պահպանակների տարածման ծրագրերի իրականացում.
- բ) առևտրի, ժամանցի և հանգստի վայրերում որակյալ պահպանակների իրացման ապահովում.
- գ) պահպանակների՝ միջազգային ստանդարտներին համապատասխանող որակի հսկողության ապահովում.
- դ) զանգվածային լրատվության միջոցներով՝ ՄԻԱՎ վարակից պաշտպանվելու միջոցների մասսայականացում.
- ե) ցուցադրական քարոզչությանը վերաբերող նյութերի հրատարակում և տարածում:

Ռազմավարություն 3. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի և ՍՃՓՅ-ների տարածման տեմպերի իջեցում մարմնավաճառների շրջանում

Միջոցառումները՝

- ա) ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի և ՍՃՓՅ-ների կանխարգելման հատուկ միջոցառումների մշակում և ներդրում, այդ թվում՝ «Հավասարը՝ հավասարին» մեթոդով.
- բ) մարմնավաճառների շրջանում ՄԻԱՎ-ի տարածման նկատմամբ համաճարակաբանական հսկման համակարգի զարգացում:

Ռազմավարություն 4. ՍՃՓՅ-ների ախտորոշման և բուժման մատչելիության ապահովում

Միջոցառումները՝

- ա) բնակչության բոլոր խմբերի համար ՍՃՓՅ-ների բուժման անանուն հաճախման կաբինետների ցանցի ընդլայնում.
- բ) ախտորոշման և բուժման ժամանակակից տեխնոլոգիաների և մեթոդների ներդրում.
- գ) բնակչության խոցելի խմբերի համար բժշկական օգնության մատչելիության և գաղտնիության ապահովում:

1.4. Մորից նորածնին ՄԻԱՎ վարակի փոխանցման կանխարգելում

Նպատակը՝ հղիության ընթացքում ՄԻԱՎ վարակակիր մորից պտղին ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում:

Ռազմավարություն 1. ՄԻԱՎ-ի հետազոտությունների իրականացում հղի կանանց շրջանում

Միջոցառումները՝

- ա) հղի կանանց շրջանում ՄԻԱՎ-ի հետազոտությունների իրականացում՝ ունիվերսալ թեստավորման սկզբունքով.
- բ) հղի կանանց ՄԻԱՎ-ի հետազոտության զուգակցում նախաթեստային և հետթեստային խորհրդատվության իրականացմանը և այդ նպատակով բուժանձնակազմի համապատասխան ուսուցում.
- գ) պտղաբեր տարիքի կանանց շրջանում ՄԻԱՎ-ի մասին իրազեկության մակարդակի բարձրացում:

Ռազմավարություն 2. ՄԻԱՎ վարակակիր հղի կանանց և նորածինների կանխարգելիչ բուժման կազմակերպում

Միջոցառումները՝

- ա) ՄԻԱՎ վարակակիր հղի կանանց հղիության և ծննդաբերության ընթացքի վարման ուղեցույցների մշակում և ներդրում.
- բ) ՄԻԱՎ վարակակիր մայրերից ծնված նորածինների կերակրման ուղեցույցների մշակում և ներդրում.
- գ) ՄԻԱՎ վարակակիր հղի կանանց և նորածինների կանխարգելիչ բուժման չափորոշիչների մշակում, ներդրում և բուժանձնակազմի համապատասխան ուսուցում.
- դ) ՄԻԱՎ վարակակիր հղի կանանց և նորածինների կանխարգելիչ հակավիրուսային բուժում և բուժման համար անհրաժեշտ դեղամիջոցների ձեռքբերում.
- ե) սնուցման համար անհրաժեշտ արհեստական կաթնախառնուրդների տրամադրում ՄԻԱՎ վարակակիր մայրերից ծնված նորածիններին:

1.5. Դոնորական արյան անվտանգության ապահովում

Նպատակը՝ դոնորական արյան և արյան բաղադրիչների փոխներարկման միջոցով ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածման կանխում:

Ռազմավարություն. Դոնորական արյան և արյան բաղադրիչների որակի նկատմամբ հուսալի լաբորատոր հսկողության ապահովում

Միջոցառումները՝

- ա) որակյալ թեստ-համակարգերի ձեռքբերում.
- բ) թեստ-համակարգերի որակի նկատմամբ հսկողության կարգի մշակում և ներդրում:

1.6. Անչափահասների և երիտասարդների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելումը

Նպատակը՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, ՍՃՓՅ-ների և թմրամոլության տարածման իջեցում երիտասարդության շրջանում:

Ռազմավարություն. Անչափահասների և երիտասարդների իրազեկության մակարդակի բարձրացում

Միջոցառումները՝

- ա) ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի, ՍՃՓՅ-ների և թմրամոլության կանխարգելման կրթական ծրագրերի մշակում ու ներդրում ուսումնական հաստատություններում և դրա համար անհրաժեշտ մեթոդական ու դիդակտիկ նյութերի մշակում և հրատարակում.
- բ) դասավանդման մեթոդաբանության հարցերով զբաղվող մանկավարժական կադրերի պատրաստում.
- գ) զինծառայողների, կալանավայրերում և ազատագրված վայրերում գտնվող անձանց համար տեղեկատվական-կրթական ծրագրերի մշակում ու ներդրում.
- դ) չկազմակերպված երիտասարդության (ուսումնական հաստատություններ չհաճախող և չաշխատող) խնդիրների լուծմանը նպատակաուղղված ծրագրերի մշակում և իրականացում.
- ե) երիտասարդության համար տեղեկատվական-կրթական նպատակային ծրագրերի ստեղծում:

1. 7. Հոգածություն ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով տառապող մարդկանց նկատմամբ

Ռազմավարություն. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով հիվանդների բուժման կազմակերպումը

Միջոցառումները՝

- ա) ՄԻԱՎ վարակակիր և ՁԻԱՅ-ով հիվանդ մեծահասակների ու երեխաների բուժման ուղեցույցների մշակում և ընդունում.
- բ) դեղամիջոցների ձեռքբերում և ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով հիվանդների բուժում:

2. Հանրապետական ծրագրի իրականացման շարունակական հսկողությունը

Նպատակը՝ ընթացիկ իրավիճակի որոշում: Փոփոխությունների գնահատում և միջոցառումների ճշգրտում:

Միջոցառումները՝

- ա) բնակչության տարբեր խմբերում ՄԻԱՎ-ի տարածման նկատմամբ ընտրանքային համաճարակաբանական հսկման համակարգի զարգացում.
- բ) պաշտոնական տվյալների, վարքային հետազոտությունների, ընտրանքային համաճարակաբանական հսկման, գաղտնի, անանուն թեստավորման, նախաթեստային և հետթեստային խորհրդատվության հիման վրա իրավիճակի արագ գնահատում.
- գ) չափանիշների հիման վրա (բաժին 4) հանրապետական ծրագրի զարգացման գնահատում:

3. Հանրապետական ծրագրի ֆինանսավորումը

Նախատեսվում է հանրապետական ծրագրի ֆինանսավորումն իրականացել հետևյալ աղբյուրներից՝

- ա) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից առողջապահության նպատակային ծրագրերի համար հատկացված գումարներ.
- բ) միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ ՄԱԿ-ի կողմից նպատակային ֆինանսավորում.

- զ) հասարակական կազմակերպությունների կողմից նպատակային ֆինանսավորում.
- դ) օրենքով չարգելված այլ աղբյուրներ:

4. Հանրապետական ծրագրի արդյունքների գնահատման չափանիշները

4.1. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի համաճարակի հակազդման ոլորտում ազգային քաղաքականության զարգացումը

Ռազմավարություն 1. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման միջոցառումների իրականացման աշխատանքների ղեկավարման միասնական համակարգի ստեղծում

Նախատեսվող արդյունքը՝

- ա) ստեղծվելու է ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական միջգերատեսչական խորհուրդ (2002թ.).
- բ) ստեղծվելու են ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման տարածքային միջգերատեսչական խորհուրդներ՝ մարզերում և Երևան քաղաքում (2002թ.):

Ռազմավարություն 2. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման ոլորտին վերաբերող Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործում

Նախատեսվող արդյունքը՝

փոփոխություններ են կատարվելու «Մարդու ինունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» օրենքում (2003թ.):

Ռազմավարություն 3. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման ոլորտի մասնագիտացված ծառայությունների զարգացում

Նախատեսվող արդյունքը՝

- ա) կստեղծվի ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի, ՍՃՓՀ-ների և թմրամոլության կանխարգելմանը, ախտորոշմանը և բուժմանը վերաբերող միասնական տեղեկատվական համակարգ (2002-2006թթ.).
- բ) ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման ոլորտում փորձարկված առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման համար, կպատրաստվեն համապատասխան մասնագետներ (2002-2004թթ.).
- գ) ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի և ՄԻԱՎ-ի հետազոտություններ իրականացնող լաբորատորիաների համար անհրաժեշտ թեստ-համակարգերի գնման ֆինանսավորում կտրամադրվի այնպիսի ծավալներով, որը հնարավորություն կտա ապահովելու ՄԻԱՎ-ի հետազոտությունների իրականացումը բնակչության խոցելի խմբերում, այդ թվում՝ հղի կանանց շրջանում, ՄԻԱՎ-ի ախտորոշումը և բնակչության գաղտնի, անանուն հետազոտման պահանջարկը (2002-2006թթ.).
- դ) բուժհիմնարկներում կներդրվի բնակչության տարբեր խմբերի (այդ թվում՝ բարձր ռիսկի խմբերի) խորհրդատվության համակարգ (2002-2006թթ.).
- ե) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ազգային ինստիտուտի հիմքի վրա մշակված և ներդրված կլինեն ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելմանը վերաբերող հարցերով զբաղվող բժշկական կադրերի պլանային վերապատրաստման կրթական ծրագրեր (2002-2006թթ.):

Ռազմավարություն 4. ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի, ՍՃՓՅ-ների և թմրամոլության կանխարգելման կրթական կառույցների զարգացում

Նախատեսվող արդյունքը՝

կմշակվի դպրոցականների և ուսանողների (սովորողների) համար ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի, ՍՃՓՅ-ների և թմրամոլության կանխարգելման հարցերին վերաբերող ուսումնական պլան (2002-2003թթ.):

4.2. Ներերակային ներարկմամբ թմրանյութեր օգտագործողների շրջանում ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի կանխարգելումը

Ռազմավարություն 1. Թմրանյութերի ոչ բժշկական օգտագործումից առաջացած վնասի նվազեցում

Նախատեսվող արդյունքը՝

- ա) մշակվելու և ներդրվելու են ներարկիչների փոխանակում նախատեսող փորձ-նական ծրագրեր (2002թ.).
- բ) թմրանյութեր օգտագործողների 25 տոկոսը կունենա տեղեկատվություն ստանալու հնարավորություն և անվտանգ վարքի ձևավորված հմտություններ, այդ թվում՝ «Հավասարը՝ հավասարին» մեթոդով (2002-2003թթ.).
- գ) թմրանյութեր օգտագործողների 80 տոկոսը կունենա տեղեկատվություն ստանալու հնարավորություն և անվտանգ վարքի ձևավորված հմտություններ, այդ թվում՝ «Հավասարը՝ հավասարին» մեթոդով: Ստեղծվելու են փոխօգնության խմբեր (2004-2006թթ.).
- դ) ընտրանքային համաճարակաբանական հսկման համակարգում 1000 ներերակային ներարկմամբ թմրանյութեր օգտագործողների շրջանում կիրականացվի ՄԻԱՎ-ի տարածման նկատմամբ հսկողություն (2002-2003թթ.):

Ռազմավարություն 2. Թմրամոլության առաջնային և երկրորդային կանխարգելում

Նախատեսվող արդյունքը՝

- ա) թմրամոլության նկատմամբ բնակչության խոցելի խմբերի 25 տոկոսը կունենա թմրամոլության կանխարգելման հարցերի մասին տեղեկատվություն ստանալու հնարավորություն (2002-2003թթ.).
- բ) թմրամոլության նկատմամբ բնակչության խոցելի խմբերի 80 տոկոսը կունենա թմրամոլության կանխարգելման հարցերի մասին տեղեկատվություն ստանալու հնարավորություն (2004-2006թթ.).
- գ) ուսումնական հաստատություններում կիրականացվեն կանխարգելման աշխատանքներ «Հավասարը՝ հավասարին» մեթոդով (2003-2006թթ.).
- դ) թմրամոլների առողջության վերականգնման համար կիրականացվեն փորձնական ծրագրեր (2004-2006թթ.):

4.3. Անվտանգ սեռական վարքագիծ

Ռազմավարություն 1. Անվտանգ սեռական վարքագծին վերաբերող հարցերի մասին բնակչության իրազեկության մակարդակի բարձրացում

Նախատեսվող արդյունքը՝

- ա) նվազելու է ՍՃՓՅ-ների տարածվածության մակարդակը (2003-2006թթ.).
- բ) գործելու է ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի և ՍՃՓՅ-ների կանխարգելման տեղեկատվական-կրթական համակարգ՝ բնակչության տարբեր խմբերի համար (2002-2006թթ.):

Ռազմավարություն 2. Պահպանակների մասսայականացում և մատչելիություն

Նախատեսվող արդյունքը՝

- ա) միզրանտների, զինծառայողների, կալանավայրերում և ազատագրկման վայրերում գտնվողների շրջանում իրականացվելու են պահպանակների տարածման ծրագրեր (2002-2006թթ.).
- բ) կապահովվի պահպանակների մատչելիությունը և որակի նկատմամբ հսկողությունը (2002-2006թթ.):

Ռազմավարություն 3. Մարմնավաճառների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի և ՍՃՓՅ-ների տարածման տեմպերի իջեցում

Նախատեսվող արդյունքը՝

- ա) կնշակվեն և մարմնավաճառների շրջանում կիրականացվեն ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի ու ՍՃՓՅ-ների կանխարգելման հատուկ ծրագրեր, այդ թվում՝ «Հավասարը՝ հավասարին» մեթոդով (2002-2003թթ.).
- բ) համաճարակաբանական հսկման համակարգում 500 մարմնավաճառի շրջանում կիրականացվի ՄԻԱՎ-ի տարածման նկատմամբ հսկողություն (2002-2003թթ.):

Ռազմավարություն 4. ՍՃՓՅ-ների ախտորոշման և բուժման մատչելիության ապահովում

Նախատեսվող արդյունքը՝

- բնակչության բոլոր խմբերի համար զարգանալու է ՍՃՓՅ-ների բուժման անանուն հաճախման կաբինետների ցանցը (2002-2006թթ.):

4.4. Մորից նորածնին ՄԻԱՎ վարակի փոխանցման կանխարգելում

Ռազմավարություն 1. ՄԻԱՎ-ի հետազոտությունների իրականացում հղի կանանց շրջանում

Նախատեսվող արդյունքը՝

- ա) բոլոր հղի կանանց շրջանում կիրականացվեն ՄԻԱՎ-ի հետազոտություններ՝ ունիվերսալ թեստավորման սկզբունքով (2002-2006թթ.).
- բ) հղի կանանց շրջանում ՄԻԱՎ-ի հետազոտությունների իրականացումը կզուգակցվի նախաթեստային և հետթեստային խորհրդատվությանը (2002-2006թթ.).

- զ) պողաբեր տարիքի կանանց շրջանում կբարձրանա ՄԻԱՎ-ի մասին իրազեկության մակարդակը (2002-2006թթ.)
- դ) կպատրաստվեն համապատասխան կադրեր՝ հղի կանանց նախաբեստային և հետբեստային խորհրդատվությունն իրականացնելու համար (2002-2003թթ.):

Ռազմավարություն 2. ՄԻԱՎ վարակակիր հղի կանանց և նորածինների կանխարգելիչ բուժման կազմակերպում

Նախատեսվող արդյունքը՝

- ա) կմշակվեն և կներդրվեն ՄԻԱՎ վարակակիր հղի կանանց հղիության և ծննդաբերության ընթացքի վարման ուղեցույցները (2002թ.)
- բ) կմշակվեն և կներդրվեն ՄԻԱՎ վարակակիր մայրերից ծնված նորածինների կերակրման չափորոշիչները (2002թ.)
- գ) կմշակվեն և կներդրվեն ՄԻԱՎ վարակակիր հղի կանանց և նորածինների կանխարգելիչ բուժման ուղեցույցները (2002թ.)
- դ) կպատրաստվեն ՄԻԱՎ վարակակիր հղի կանանց և նորածինների կանխարգելիչ բուժումն իրականացնող համապատասխան բուժաշխատողներ (2002-2003թթ.)
- ե) ձեռք կբերվեն ՄԻԱՎ վարակակիր հղի կանանց և նորածինների կանխարգելիչ հակավիրուսային բուժման համար անհրաժեշտ դեղամիջոցներ (2002-2006թթ.)
- զ) կիրականացվի բոլոր ՄԻԱՎ վարակակիր հղի կանանց և նորածինների կանխարգելիչ հակավիրուսային բուժում (2002-2006թթ.)
- է) ՄԻԱՎ վարակակիր մայրերից ծնված բոլոր նորածինները կապահովվեն կերակրման համար անհրաժեշտ արհեստական կաթնախառնուրդներով (2002-2006թթ.):

4.5. Դոնորական արյան անվտանգության ապահովում

Ռազմավարություն. Դոնորական արյան և արյան բաղադրիչների որակի նկատմամբ հուսալի լաբորատոր հսկողության ապահովում

Նախատեսվող արդյունքը՝

- ա) կապահովվի ՄԻԱՎ-ի նկատմամբ դոնորական արյան որակյալ թեստավորում (2002-2006թթ.)
- բ) կմշակվի և կներդրվի թեստ-համակարգերի որակի նկատմամբ հսկողության կարգը (2002թ.):

4.6. Անչափահասների և երիտասարդների շրջանում ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելումը

Ռազմավարություն. Անչափահասների և երիտասարդների իրազեկության մակարդակի բարձրացում

Նախատեսվող արդյունքը՝

- ա) մշակվելու և հրատարակվելու են ուսումնական հաստատություններում ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի, ՍՃՓՅ-ների և թմրամոլության կանխարգելման կրթական ծրագրերի համար անհրաժեշտ մեթոդական և դիդակտիկ նյութեր (2002-2005թթ.)
- բ) ուսումնական հաստատությունների բարձր դասարանցիների 30 տոկոսն ընդգրկվելու է ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի, ՍՃՓՅ-ների և թմրամոլության կանխարգելման կրթական ծրագրերում (2002-2003թթ.)

- գ) ուսումնական հաստատությունների բոլոր բարձր դասարանցիներն ընդգրկվելու են ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի, ՍՃՓՅ-ների և թմրամոլության կանխարգելման կրթական ծրագրերում (2004-2006թթ.)։
- դ) զինծառայողների համար կմշակվեն և կներդրվեն ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի, ՍՃՓՅ-ների և թմրամոլության կանխարգելման կրթական ծրագրեր (2002-2006թթ.)։
- ե) չկազմակերպված երիտասարդության համար կմշակվեն և կներդրվեն ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի, ՍՃՓՅ-ների ու թմրամոլության կանխարգելման ծրագրեր (2002-2006թթ.)։
- զ) պատրաստվելու են ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի, ՍՃՓՅ-ների և թմրամոլության կանխարգելմանը վերաբերող հարցերի գծով դասավանդման մեթոդաբանության մանկավարժական կադրեր (2002-2004թթ.)։
- է) բուհերում և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում ներդրվելու են ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի, ՍՃՓՅ-ների և թմրամոլության կանխարգելման կրթական ծրագրեր (2005-2006թթ.)։

4.7. Հոգածություն ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով տառապող մարդկանց նկատմամբ

Ռազմավարություն. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով հիվանդների բուժման կազմակերպումը

Նախատեսվող արդյունքը՝

- ա) մշակվելու և ընդունվելու են ՄԻԱՎ վարակակիր ու ՁԻԱՅ-ով հիվանդ մեծահասակների և երեխաների բուժման չափանիշները (2002թ.)։
- բ) բուժման կարիք ունեցող ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով հիվանդների 100 տոկոսն ստանալու է համարժեք, այդ թվում՝ հակավիրուսային բուժում (2002-2006թթ.)։

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման բնագավառի առաջնահերթ միջոցառումների իրականացման

NN ը/կ	Առաջնահերթ միջոցառումների անվանումը	Կատարող նախարարությունը, գերատեսչություն	Կատարման ժամկետը
1	2	3	4
1.	ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի համաճարակի հակազդման ոլորտում ազգային քաղաքականության զարգացումը		
	ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական միջգերատեսչական խորհրդի ստեղծում	ՀՀ կառավարություն	2002 թ.
	ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման տարածքային խորհուրդների ստեղծում Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում	ՀՀ տարածքային կառավարման մարմիններ	2002 թ.
	ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման միջոցառումների ընթացիկ աշխատանքների հսկում և համակարգում	ՀՀ առողջապահության նախարարություն	2002 թ.
	«Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների կատարում	ՀՀ առողջապահության նախարարություն	2003 թ.
	ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի, ՍՃՓՅ-ների ու թմրամոլության կանխարգելմանը, բուժմանը և ախտորոշմանը վերաբերող միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում	ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2006 թթ.
	ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման բնագավառում փորձարկված առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման հարցերով զբաղվող մասնագետների պատրաստում	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն հասարակական կազմակերպություններ	2002-2004 թթ.
	ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի և ՄԻԱՎ-ի հետազոտություններ իրականացնող լաբորատորիաների համար անհրաժեշտ թեստ-համակարգերի գնման ֆինանսավորման տրամադրում՝ այնպիսի ծավալներով, որը հնարավորություն կտա ապահովելու ՄԻԱՎ-ի հետազոտությունների իրականացումը բնակչության խոցելի խմբերում, այդ թվում՝ հղի կանանց շրջանում, ՄԻԱՎ-ի ախտորոշումը և բնակչության գաղտնի, անանուն հետազոտման պահանջարկը	ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2006 թթ.
	Բնակչության, այդ թվում՝ բարձր ռիսկի խմբերի համար խորհրդատվության համակարգի ներդրում	ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2006 թթ.
	ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման հարցերով զբաղվող բժշկական կադրերի պլանային վերապատրաստման նպատակով ՀՀ առողջապահության նախարարության ազգային ինստիտուտի կողմից կրթական ծրագրի իրականացում	ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2006 թթ.

1	2	3	4
	Դպրոցականների և ուսանողների (սովորողների) համար ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի, ՍՃՓՅ-ների և թմրամոլության կանխարգելման հարցերին վերաբերող ուսումնական պլանի մշակում	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2002-2003 թթ.
2.	Ներերակային ներարկմամբ թմրանյութեր օգտագործողների շրջանում ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելումը		
	Պետության համապատասխան կառույցների կողմից թմրանյութերի անօրինական արտադրության, տեղափոխման, պահման և իրացման ոլորտներում ազդեցության ուժեղացում	ՀՀ ներքին գործերի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե	2002-2006 թթ.
	Բնակչության խոցելի խմբի ներկայացուցիչների իրազեկության մակարդակի բարձրացում, անվտանգ վարքի հմտությունների ձևավորում, այդ թվում «Հավասարը՝ հավասարին» մեթոդով: Փոխօգնության խմբերի ստեղծում	ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2006 թթ.
	Ներերակային ներարկմամբ թմրանյութեր օգտագործողների խոցելի խմբում ՄԻԱՎ-ի տարածման նկատմամբ համաճարակաբանական հսկման համակարգի ներդրում և զարգացում	ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2003 թթ.
	Բնակչության շրջանում թմրամոլության կանխարգելման բնագավառի մասին իրազեկության մակարդակի բարձրացում՝ զանգվածային լրատվության միջոցներով	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության գրահրատարակչական գործակալություն	2002-2006 թթ.
	Ուսումնական ծրագրերում թմրամոլության կանխարգելմանը վերաբերող հարցերի մշակում և ներդրում: «Հավասարը՝ հավասարին» մեթոդի կիրառում	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն հասարակական կազմակերպություններ	2003-2006 թթ.
	Թմրամոլների համար վերականգնողական համակարգի ստեղծում	ՀՀ առողջապահության նախարարություն	2004-2006 թթ.
3.	Անվտանգ սեռական վարքագիծ		
	Բնակչության տարբեր խմբերի համար ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի և ՍՃՓՅ-ների կանխարգելման տեղեկատվական-կրթական ծրագրերի մշակում	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2002-2004 թթ.
	Բուժաշխատողների շրջանում ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելմանը վերաբերող գիտելիքների մակարդակի բարձրացում	ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2006 թթ.
	Բնակչության խոցելի խմբերի համար զանգվածային միջացառումների իրականացում, տեղեկատվական-կրթական նյութերի հրատարակում	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն հասարակական կազմակերպություններ	2002-2006 թթ.
	Միգրանտների, զինծառայողների և ազատագրված վայրերում գտնվողների շրջանում պահպանակների տարածման ծրագրերի իրականացում	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ներքին գործերի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն	2002-2006 թթ.
	Առևտրի, ժամանցի և հանգստի վայրերում որակյալ պահպանակների իրացման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2006 թթ.

1	2	3	4
	Պահպանակների միջազգային ստանդարտներին համապատասխանող որակի հսկողության ապահովում	ՀՀ կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման վարչություն	2002-2006 թթ.
	Ջանգվածային լրատվության միջոցներով՝ ՄԻԱՎ վարակից պաշտպանվելու միջոցների մասսայականացում	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն	2002-2006 թթ.
	Ցուցադրական քարոզչությանը վերաբերող նյութերի հրատարակում և տարածում	ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2006 թթ.
	ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի և ՍՃՓՀ-ների կանխարգելման հատուկ միջոցառումների մշակում և ներդրում, այդ թվում՝ «Հավասարը՝ հավասարին» մեթոդով	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն	2002-2006 թթ.
	Մարմնավաճառների շրջանում ՄԻԱՎ-ի տարածման նկատմամբ համաճարակաբանական հսկման համակարգի զարգացում	ՀՀ առողջապահության նախարարություն հասարակական կազմակերպություններ	2002-2003 թթ.
	Բնակչության բոլոր խմբերի համար ՍՃՓՀ-ների բուժման անանուն հաճախման կաբինետների ցանցի ընդլայնում	ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2006 թթ.
	ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի փստորոշման և բուժման ժամանակակից տեխնոլոգիաների և մեթոդների ներդրում	ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2006 թթ.
	Բնակչության խոցելի խմբերի համար բժշկական օգնության մատչելիության և գաղտնապահության ապահովում	ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2006 թթ.
4.	Մորից նորածնին ՄԻԱՎ վարակի փոխանցման կանխարգելում		
	Հղի կանանց շրջանում ՄԻԱՎ-ի նկատմամբ հետազոտությունների իրականացում՝ ունիվերսալ տեստավորման սկզբունքով	ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2006 թթ.
	Հղի կանանց ՄԻԱՎ-ի հետազոտության զուգակցում նախաթեստային և հետթեստային խորհրդատվությանը	ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2006 թթ.
	Հղի կանանց ՄԻԱՎ-ին վերաբերող նախաթեստային և հետթեստային խորհրդատվության անցկացման համար համապատասխան կադրերի ուսուցում	ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2006 թթ.
	Պտղաբեր տարիքի կանանց շրջանում ՄԻԱՎ-ի մասին իրազեկության մակարդակի բարձրացում	ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2003 թթ.
	ՄԻԱՎ վարակակիր հղի կանանց հղիության և ծննդաբերության ընթացքի վարման ուղեցույցների մշակում և ներդրում	ՀՀ առողջապահության նախարարություն	2002 թ.
	ՄԻԱՎ վարակակիր մայրերից ծնված նորածնների կերակրման չափորոշիչների մշակում և ներդրում	ՀՀ առողջապահության նախարարություն	2002 թ.
	ՄԻԱՎ վարակակիր հղի կանանց և նորածնների կանխարգելիչ հակավիրուսային բուժման համար անհրաժեշտ դեղամիջոցների ձեռքբերում	ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2006 թթ.
	ՄԻԱՎ վարակակիր հղի կանանց և նորածնների կանխարգելիչ հակավիրուսային բուժում	ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2006 թթ.
	ՄԻԱՎ վարակակիր հղի կանանց և նորածնների կանխարգելիչ բուժման ուղեցույցների մշակում և ներդրում	ՀՀ առողջապահության նախարարություն	2002 թ.

1	2	3	4
	ՄԻԱՎ վարակակիր հղի կանանց և նորածինների կանխարգելիչ բուժումն իրականացնող բժշկական կադրերի պատրաստում	ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2003 թթ.
	Կերակրման համար անհրաժեշտ արհեստական կաթնախառնուրդների տրամադրում ՄԻԱՎ վարակակիր մայրերից ծնված նորածիններին	ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2006 թթ.
5.	Դոնորական արյան անվտանգության ապահովում		
	Որակյալ թեստ-համակարգերի ձեռքբերում	ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2006 թթ.
	Թեստ-համակարգերի որակի նկատմամբ հսկողության կարգի մշակում և ներդրում	ՀՀ առողջապահության նախարարություն	2002 թ.
6.	Անչափահասների և երիտասարդների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելումը		
	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, ՍՃՓՀ-ների և թմրամոլության կանխարգելման կրթական ծրագրերի մշակում և ներդրում ուսումնական հաստատություններում	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն	2002-2006 թթ.
	Ուսումնական հաստատությունների համար ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, ՍՃՓՀ-ների և թմրամոլության կանխարգելման կրթական ծրագրերի իրականացումն ապահովող անհրաժեշտ մեթոդական և դիդակտիկ նյութերի մշակում ու հրատարակում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2005 թթ.
	Դասավանդման մեթոդաբանության հարցերով զբաղվող մանկավարժական կադրերի պատրաստում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2004 թթ.
	Զինծառայողների, կալանավորների և ազատագրված վայրերում գտնվողների համար տեղեկատվական-կրթական ծրագրերի մշակում և ներդրում	ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2006 թթ.
	Չկազմակերպված երիտասարդության (ուսումնական հաստատություններ չհաճախող և չաշխատող) խնդիրների լուծմանը նպատակաուղղված ծրագրերի մշակում և իրականացում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն	2002-2006 թթ.
	Երիտասարդության համար տեղեկատվական-կրթական նպատակային ծրագրերի ստեղծում	ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության գրահրատարակչական գործակալություն	2002-2006 թթ.
7.	Հոգածություն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով տառապող մարդկանց նկատմամբ		
	ՄԻԱՎ վարակակիր և ՁԻԱՀ-ով հիվանդ մեծահասակների ու երեխաների բուժման ուղեցույցների մշակում և ընդունում	ՀՀ առողջապահության նախարարություն	2002 թ.
	Դեղամիջոցների ձեռքբերում և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների բուժում	ՀՀ առողջապահության նախարարություն	2002-2006 թթ.

ԿԱԶՄ

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական միջգերատեսչական խորհրդի

- ՀՀ առողջապահության նախարար (խորհրդի նախագահ)
- ՀՀ գլխավոր պետական սանիտարական բժիշկ (խորհրդի նախագահի տեղակալ)
- ՀՀ ազգային անվտանգության նախարարի տեղակալ
- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
- ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ
- ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ
- ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
- ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարի տեղակալ
- ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ
- ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ
- ՀՀ սոցիալական ապահովության նախարարի տեղակալ
- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարարի տեղակալ
- ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ
- Երևանի քաղաքապետի տեղակալ
- ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահի տեղակալ
- ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության պետի տեղակալ
- ՀՀ կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափազիտության և սերտիֆիկացման վարչության պետի տեղակալ
- ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տնօրեն (խորհրդի քարտուղար)